

ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Մարտ 2ին Առաջնորդ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Բրշ. Ատիս Սրկ. Պետրոսեանի այցելեց Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան Վարժարանը, սիրալիր կերպով դիմաւորուեցաւ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քահանայ Փեթրյեանի եւ Տնօրէն՝ Տիար Շահէ Մանկրեանի կողմէ:

Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ Տնօրէնութեան, Ուսուցչական Կազմին եւ ապա աշակերտութեան հետ եւ տուաւ իր ցուցմունքներն ու թելադրութիւնները: Գնահատեց Տնօրէնութեան եւ Ուսուցչական Կազմին նուիրեալ ծառայութիւնները՝ մեր մատաղ սերունդի դաստիարակութեան կապակցութեամբ:

Սրբազան Հայրը հանդիպում ունեցաւ նաեւ Վարժարանի Խնամակալ Մարմնի հետ, որուն Ատենապետն է Տիար Յարութիւն Հիլալեան: Նկատի առնուած նիւթերուն մէջ յատկապէս խօսուեցաւ Վարժարանի կից խաղավայր մը ունենալու կարելիութեան մասին: Սրբազան Հայրը գնահատեց Խնամակալ Մարմնին կատարած նուիրեալ ծառայութիւնը: